ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ 1905—1908 ԹԹ.

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՁԱՆ

XX դ. սկզբին սոցիալական ու ազգային հակասությունները Թուրքիայում սրվելով հասան մեծ չափերի։ Աշխատավոր զանգվածները գտնվում էին թե՛ ֆեոդալական, թե՛ կապիտալիստական և թե՛ գաղութային ճնշման տակ։ Առավել ծանր էր ոչ թուրք ժողովուրդների գրությունը, որոնք սոցիալական հարբստահարումների հետ միասին ենթարկվում էին նաև ազգային ու կրոնական ճնշման։ Սուլթանական բռնապետությունը անտանելի էր դարձել նաև թուրքական երիտասարդ բուրժուազիայի համար, որը չուներ անձի ու գույքի ապահովություն և չէր կարողանում կապիտալիստական լայն գործունեություն ծավալել։ Այդ բռնապետությունը անհամակրելի էր դարձել անգամ բուրժուական զարգացման ուղին բռնած կալվածատերերի և մանր պաշտոնյաների համար։ Այսպիսով, համիդյան բռնակալության սոցիալական հենարանը խիստ նեղացել էր ու դարձել խախուտ։ Առիթ էր հարկավոր սոցիալական ահեղ ցնցումների ու տիրակալի գահավիժման համար։ Այդ առիթը եղավ ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, որը մեծ ազդեցություն ունեցավ ինչպես Եվրոպայի, այնպես էլ Ասիայի մի շարք ժողովուրդների հեղափոխական պայքարի վերելքի վրա։ Վ. Ի. Լենինը նշել է. «1905 թ. ռուսական շարժումից հետո դեմոկրատական հեղափոխությունն ընդգրկել է ողջ Ասիան՝ Թուրքիան, Պարսկաստանը, Չինաստանը։ Աճում է խմորումն անգլիական Հնդկաստանում»[1]։

Իմանալով Պետերբուրգի իրադարձությունների մասին, Աբդուլ Համիդը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որպեսզի հեղափոխական տրամադրությունները Ռուսաստանից չթափանցեն Թուրքիա։ Նրա անձնական քարտուղարի վկայությամբ, սուլթանը կորցրեց քունը, երբ իմացավ, որ «Իշխան Պոտյոմկին-Տավրիչեսկի» զրահանավը կարմիր դրոշակ պարզած լողում է Սև ծովում։ Համիդը կարգադրեց թույլ չտալ, որ «խռովարարները» մոտենան թուրքական ափերին, մանավանդ անցնեն Բոսֆոր-Դարդանելով»[2]։ Բայց հակառակ նրա ցանկության, ռուսական հեղափոխությունը ներթափանցում է Թուրքիա ու բռնակալության դեմ ոտքի հանում ճնշված ու կեղեքված զանգվածներին։ Այն արագացրեց ու ակտիվացրեց ազատագրական շարժումներն ինչպես կայսրության այլ շրջաններում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 83։

[2] Ю. А. Петросян, Младотурецкое движение, М., 1971, стр. 271.

Դեռ 1905 թ. մարտին Բիթլիսի հայերը ըմբոստացան կառավարության սանձարձակ հարկային քաղաքականության դեմ ու կտրականապես մերժեցին իշխանությունների այն պահանջը, թե վիլայեթի չքավորների հարկերը պետք է վճարեն քաղաքի ունևորները կամ բոլոր քաղաքացիները։ Սակայն պաշտոնյաները ճնշեցին այդ շարժումը և հավաքեցին հարկերը[3]։

Նույն թվականի ապրիլին բիթլիսցիները ծառացան սննդամթերքների թանկության դեմ։ Այսպես, օրինակ, մեկ կոտ ցորենի արժեքը 2,5—3 ղուրուշից հասել էր 14—15 ղուրուշի։ Ժողովուրդը շարժվեց կառավարչատուն և պահանջեց անհապաղ իջեցնել սննդամթերքների գները։ Կուսակալ Ֆերիդ բեյը պատճառաբանեց, որ գների աճը արդյունք է խստաշունչ ձմռան, որը կտրել էր քաղաքի կապը հացառատ շրջանների հետ և ապա դրությունից դուրս գալու համար հայ վաճառականներից մեկին ստիպեց իր 4000 կոտ ցորենը վաճառել ցածր գներով։ Այդուհանդերձ բնակչության դժգոհությունը գնալով աճեց։ Փողոցներում, անգամ կուսակալի գրասենյակի պատերին երևացին թռուցիկներ, որոնցում ասված էր, որ սովը հայ գյուղացիության տնտեսական քայքայման արդյունք է՝ կառավարության հայակուլ քաղաքականության հետևանք։ Թռուցիկներում նշվում էր, որ եթե իրավիճակն այդպես շարունակվի, ապա կուսակալը կսպանվի։ Այնուհետև կոչ էր արվում քաղաքի բոլոր բնակիչներին՝ միասնաբար պայքարել կառավարության դեմ։ 1905 թ. մայիսի 1-ին կանանց բազմությունը շարժվեց կառավարչատուն և պահանջեց անհապաղ կարգավորել պարենամթերքների գները։ Ֆերիդ բեյը կամենալով իրենց տնտեսական դրության բարելավման համար քաղաքի հայ և թուրք բնակչության մղած պայքարը վերածել ազգամիջյան կռիվների, անձամբ գնաց շուկա, բռնազրավեց հայերի հացը ու բաժանեց մահմեդականներին[4], բայց նրա փորձը ապարդյուն անցավ։

Բիթլիսցիների հաջորդ ելույթը տեղի ունեցավ նույն թվականի հուլիսի 26-ին, երբ կառավարության պահանջով կուսակալը փորձեց հավաքել նոր հարկը[5], որը պետք էր հավաքեր դեռ մարտին, բայց վախենալով ընդվզումներից, առժամանակ հետաձգել էր։ Սակայն բիթլիսցիները կտրականապես հրաժարվեցին հարկ վճարել։ Ֆերիդ բեյն այդ մասին ահազանգեց Կ. Պոլիս, որտեղից պահանջեցին ինչ գնով էլ լինի հավաքել հարկը։ Ժողովուրդը նորից հրաժարվեց և փորձեց բողոքի բազմաթիվ հեռագրեր ուղարկել մայրաքաղաք, բայց կուսակալը կանխեց դա[6]։

Հեղափոխական ընդվզումները Բիթլիսում ավելի մեծ չափով ծավալվեցին 1907 թ. ամռանը։ Դեռ մարտի 16-ին ժողովուրդը դժգոհելով կառավարության հարկային քաղաքականությունից և սննդամթերքների թանկացումից, ցանկացավ ցույցի դուրս գալ և զայրույթ հայտնել Ֆերիդ բեյին, որը ոչ միայն որևէ քայլ չէր կատարում բնակչության նյութական վիճակը բարելավելու համար, այլև պաշտոնի չարաշահումով ու կաշառակերությամբ ավելի էր ծան-

---

3 Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ (այսուհետև՝ ՌԱՔԱ), ֆ. «Քաղարխիվ», 1905, ց. 482, գ. 539, թ. 49։

4 Նույն տեղում, թ. 79։

5 1905 թ. կառավարությունը սահմանել էր, որ յուրաքանչյուր ծառայող, ներառյալ նաև պաշտոնյաներն ու զինվորականները, պարտավոր են ամեն ամիս պետությանը վճարել իրենց երեք օրվա աշխատավարձը։

6 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1905, ց. 482, գ. 539, թթ. 138—140։

բացնում այն։ Սակայն Երկրաշարժը կանխեց դա։ Ժողովուրդը փորձեց ցույցի դուրս գալ նույն թվականի ապրիլի 13-ին, բայց դա ևս կուսակալի հիվանդության պատճառով հետաձգվեց։ Վերջապես՝ 1907 թ. հունիսի 9-ին 500 հոգի, զինված փայտերով ու երկաթներով, բռնեցին Ֆերիդ բեյին ու ծեծելով տարան կառավարչատուն։ Այնուհետև նրանք հեռագրով կառավարությունից պահանջեցին պաշտոնազրկել կուսակալին, այլապես կսպանեն նրան կամ կառաջացնեն «մեծ անկարգություն»[7]։ Սակայն կառավարությունը Ֆերիդ բեյին ոչ միայն չպաշտոնազրկեց, այլև բիթլիսցիներին սպառնաց զինված ուժի գործադրմամբ։ Մահմեդական հոգևորականները մասսաների ճնշման տակ, ինչպես նաև վախենալով զրկվել ժողովրդի մեջ ունեցած ազդեցությունից, հայտարարեցին, որ այդ դեպքում կկռվեն զինվորների դեմ, միայն թե հասնեն Ֆերիդ բեյի պաշտոնազրկմանը։ Ապստամբները երեք օր քաղաքը պահեցին իրենց ձեռքում։ Հետագեմ տարրերն այդ ընթացքում կրկին փորձեցին շարժումը վերածել հայկական կոտորածների, բայց վերստին անհաջողություն կրեցին։ Այս ամենը ստիպեց սուլթանին 1907 թ. հունիսի 12-ին պաշտոնազրկել Ֆերիդ բեյին։ Նոր կուսակալ Թահիր փաշան դրությունից դուրս գալու համար վարեց խորամանկ քաղաքականություն. ամեն մի դիմողի առաջարկում էր առժամանակ սպասել։ Հետո կազմեց հանձնաժողով և հանձնարարեց «քննել» բողոքները։ Ի վերջո պաշտպանելով քաղաքի վերնախավի շահերը, ժողովրդին լռեցրեց սպառնալիքներով[8]։ «Վտակ» թերթը, խոսելով Բիթլիսի դեպքերի մասին, իրավացիորեն գրում է. «...ժողովուրդը մնաց նույն նախկին վիճակում, մերկ ու խեղճ։ Ահա այս էր Բաղեշի կես ժողովրդական և շեյխական հեղափոխությունը»[9]։

Հեղափոխական շարժումները շուտով Բիթլիսից թափանցեցին Դիարբեքիր։ Ժողովուրդն այստեղ սկզբում ծառացավ գույքային և անձի անապահովության դեմ։ 1905 թ. ամռանը դիարբեքիրցիները բողոքեցին Իբրահիմ փաշայի ոտնձգությունների դեմ։ Տեղական իշխանությունները, սակայն, անուշադրության մատնեցին այդ բողոքը։ Փաշան օգտվելով դրանից՝ ներխուժեց Դիարբեքիր, թալանեց բնակիչներին և ապա ավերեց շրջակա գյուղերը, որոնք պատկանում էին Դիարբեքիրում բնակվող կալվածատերերին։ Նրանք, տուժելով Իբրահիմի ավազակային հարձակումից և ձգտելով ժողովրդական զանգվածների ցասումն օգտագործել իրենց շահերի համար, ոտքի հանեցին քաղաքի բնակիչներին և նրանց առաջնորդեցին կուսակալ Աթա բեյի բնակարանը ու պահանջեցին պատժել ոճրագործին։ Սակայն տեսնելով, որ կուսակալը չի ունկնդրում իրենց, գրավեցին քաղաքի հեռագրատունը և հեռագրեցին մայրաքաղաք՝ պահանջելով պատասխանատվության կանչել Իբրահիմ փաշային և քաղաքում ու նրա շրջակայքում կարգ ու կանոն հաստատել։ Կ. Պոլսից առաջարկեցին ցրվել՝ խոստանալով քննել Իբրահիմ փաշայի վարքագիծը։ Ամիսներ հետո Դիարբեքիր ժամանած հանձնաժողովը գործնական ոչինչ չարեց և հեռացավ քաղաքից, ժողովրդին խաբելով, թե Իբրահիմ փաշայի գործը կքննվի Հալեպում։

---

7 Նույն տեղում, գ. 541, թ. 113։

8 Նույն տեղում, թթ. 113—142։

9 «Վտակ», 1908, № 32։

Անպատիժ մնացած Իբրահիմ փաշան 1907 թ. վերսկսեց իր ասպատակությունները և կրկին կողոպտեց Դիարբեքիրն ու նրա շրջակա գյուղերը։ Դրանից վրդովված դիարբեքիրցիները հոկտեմբերին նորից ոտքի ելան, շրջապատեցին կառավարչատունը և պահանջեցին անհապաղ դատել Իբրահիմ փաշային։ Կուսակալն իմանալով, որ Իբրահիմը հովանավորվում է սուլթանի կողմից, կաշառում է նրան և դրանով ազատվում իր բազմաթիվ եղեռնագործությունների համար արժանի հատուցումից[10] և զգալով, որ անզոր է ճնշել ժողովրդական պոռթկումը, հիվանդ ձևացավ, կնիքը հանձնեց ամբոխին ու հայտարարեց. «Ինչ կուզեք ըրեք, գիս հանգիստ ձգեք, ես հիվանդ եմ»[11]։ Վերցնելով կնիքը, ժողովուրդը նոյեմբերի 16—20-ը բողոքի 15 հեռագիր ուղարկեց Կ. Պոլիս, բայց պատասխան չստացավ։ Հեռագրերի տակ մահմեդականների հետ միասին ստորագրում էին նաև քրիստոնյաները։ Տեսնելով կառավարության անտարբերությունը, ժողովուրդը գրավեց նաև երկրագործական բանկը, պետական գանձարանը և նույնիսկ զինապահեստը։ Լսելով այդ մասին, նոյեմբերի 27-ին մայրաքաղաքից պատասխանեցին, որ Իբրահիմ փաշան դատվելու նպատակով կանչված է Հալեպ։ Դիարբեքիրցիները չգոհանալով կառավարության այդ պատասխանով, նոյեմբերի 28-ին նոր հեռագիր ուղարկեցին Կ. Պոլիս և պահանջեցին անպայման պատժել Իբրահիմին, իսկ Աթա բեյին հեռացնել կուսակալի պաշտոնից։ Կառավարությունը ստիպված կատարեց ալեկոծված զանգվածների պահանջը։ Մայրաքաղաքից հայտնեցին, որ կուսակալն արդեն պաշտոնազրկվել է և նրա փոխարեն նշանակվել է Մոսուլի վալի Հասան փաշան, իսկ Իբրահիմը կանչված է Հալեպ՝ դատվելու։ Բացի այդ, կառավարությունն առաջարկում էր դիարբեքիրցիներին դադարեցնել ցույցերը և ցրվել։

Քաղաքի վերնախավը բավարարվեց այդ պատասխանով և երկյուղ կրելով պայքարի խորացումից ու ծավալումից, ժողովրդին առաջարկեց ցրվել։ Հետադիմական տարրերն իրենց հերթին ձգտում էին շարժումն ուղղել հայերի դեմ։ Վիլայեթի զինվորական ղեկավարությունը քաղաքի հայկական թաղամասերում կենտրոնացրեց 27.000 զինվոր, որոնք շարժումը կրկնվելու դեպքում սկսելու էին հայկական կոտորածները։ Սակայն այդ ամենը տեղի չունեցավ, քանզի բնակչության ճնշող մեծամասնության պայքարն ուղղված էր ընդհանուր անապահովության դեմ։

1908 թ. սկզբներին Դիարբեքիրում ծայր առավ ժողովրդական նոր շարժում՝ ուղղված կառավարության հարկային քաղաքականության դեմ։ Շարժման մասնակիցները համարյա բացառապես մահմեդականներ էին, իսկ հայերը զգուշացնելով, որ իշխանությունները կարող են հուզումների մեջ մեղադրել իրենց, չեզոք մնացին։ Ժողովուրդը հեռագրեց մայրաքաղաք, պահանջելով իջեցնել հին հարկերը, իսկ նորը չսահմանել, որովհետև անկարող են վճարել։ Մարտի վերջին նրանց միացան նաև Օսմանյան բանակի կապալառուները (գոնթորաջիները) և պահանջեցին պետությանը տրամադրած իրենց գրամը։ Կառավարությունը շարժումը չլատելու նպատակով կատարեց կապալառուների պահանջը, իսկ ժողովրդական զանգվածներին պատժեց[12]։

---

10 В. А. Гордлевский, Избранные сочинения, т. III. М., 1962, стр. 116.

11 «Դրոշակ», 1908, № 1, էջ 10։

12 «Վտակ», 1908, № 47, 73։

Հեղափոխական դեպքերն ավելի ցայտուն արտահայտվեցին Էրզրումում։ Սուլթանի ներքին քաղաքականությունից դժգոհ մահմեդական վաճառականներն ու կապալառուները դեռևս 1906 թ. սկզբներին ստեղծեցին «Ջան-վերիր» («Հոգի տվող») կազմակերպությունը և իրենց ձեռքը վերցրեցին քաղաքի բնակչության տարերային հուզումների ղեկավարությունը։ Շուտով սրանց հարեցին նաև որոշ պաշտոնյաներ և անգամ ժանդարմներ, որոնք երկար ժամանակ աշխատավարձ չէին ստացել։ Մարտի 5-ին ջանվերիրները ալեկոծված զանգվածներին առաջնորդեցին դեպի Էրզրումի կուսակալ Նազիմ փաշայի բնակարանը և կազմակերպեցին մանիֆեստացիա։ Քաղաքի կայազորապետը, որ Նազիմ փաշայի տանն էր, ռազմական ուժի գործադրման սպառնալիքով ցուցարարներին առաջարկեց ցրվել, սակայն վերջիններս հեգնեցին նրան։ Տեսնելով դրության լրջությունը, Նազիմ փաշան ցուցարարներին առաջարկեց ներկայացուցիչների միջոցով հայտնել իրենց պահանջները։ Ցուցարարները կուսակալին առաջարկեցին անհապաղ փոխել քաղաքագլխին, պաշտոնաղրկել իրենց դիրքը չարաշահող մի շարք անձանց և թեթևացնել հարկային բեռը։ Նազիմ փաշան խոստացավ այդ պահանջների մասին հաղորդել մայրաքաղաք, բայց դա չբավարարեց ժողովրդին։ Մարտի 6-ին Նազիմ փաշայի տան առաջ ավելի հոծ բազմություն հավաքվեց (շուրջ 20.000 մարդ)։ Դրությունից դուրս գալու համար կուսակալը խոստացավ կատարել ամբոխի պահանջը, բացի հարկերի թեթևացումից, որի համար պետք է ստանար կառավարության թույլտվությունը։ Ժողովուրդը հուսալով, որ կուսակալի խոսքին կհետևի գործը, ցրվեց[13]։ Բայց մարտի 8-ին, երբ լուր տարածվեց, որ Նազիմ փաշան խաբել է, ջանվերիրները հեռագրեցին կառավարությանը և եղած պահանջներին ավելացրին նաև կուսակալի վտարումը՝ սպառնալով ապստամբությամբ։ Մարտի 12-ին Նազիմ փաշան հրապարակեց մեծ վեզիրի պատասխանը, որը հայտնում էր, թե կառավարության հարկային քաղաքականությունը ընդհանուր է ողջ կայսրության համար և Էրզրումը չի կարող բացառություն կազմել։ Ապա սպառնալով, որ «կանգ չի առնի արյունահեղության առաջ»[14], ցուցարարներին առաջարկեց ցրվել ու տպավորություն ստեղծելու համար ձերբակալեց երկու սպայի՝ որպես խռովության կազմակերպիչների, և քաղաքի փողոցներում նշանակեց զինվորական պարեկներ։

Զայրացած կառավարության այդ վարքագծից, ժողովուրդը մարտի 15-ին նորից գրավեց հեռագրատունը, կտրեց կուսակալի կապը հեռագրատան հետ և նոր հեռագիր ուղարկեց մայրաքաղաք։ Մարտի 16-ին Նազիմ փաշան զորք հանեց ժողովրդի դեմ, բայց զինվորները հրաժարվեցին կրակել։

Կառավարությունն իմանալով իրադրության բարդացման մասին, թուրքական բանակի IV կորպուսի մուշիր Զաքքի փաշային առաջարկեց մեկնել Էրզրում և հանգստացնել ժողովրդին։ Սակայն ջանվերիրները, որոնք մարտի 16-ից քաղաքը վերցրել էին իրենց ձեռքը[15], բնակչության պաշտպանությունն ստանալու համար կոչ արեցին՝ չվճարել նոր հարկը։ Մարտի 17-ին Նազիմ փաշան, փորձելով իշխանությունը ետ նվաճել ջանվերիրներից, հայտարարեց,

---

13 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1906, գ. 1642, թթ. 25—28։

14 Նույն տեղում, թ. 31։

15 Վրացական ՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՎՍՍՀ ԿՊՊԱ), ֆ. 71, գ. 7, թթ. 51—53։

թե նոր հարկի գանձումն առայժմ հետաձգվում է և էրզրումցիներին առաջարկեց դադարեցնել ցույցերն ու ցրվել։ Սակայն նրա փորձն ապարդյուն անցավ։ Մարտի 18-ին ընդվզումները քաղաքում ավելի բորբոքվեցին, երբ ջանվերիրները Զաքքի վիլայեթային սպասող բազմությանը հայտարարեցին, թե նա չի գալու և որ նրա գալստյան մասին լուրը տարածել է կուսակալը, որպեսզի հանգստացնի ալեկոծված դանդվածներին ու հաշվեհարդար տեսնի նրանց հետ։ Ժողովուրդը վերստին հեռագիր ուղարկեց շեյխ ուլ-իսլամին։ Հաջորդ օրը ստացվեց Զաքքի փաշայի պատասխանը, որով հայտնվում էր, թե կուսակալն արդեն պաշտոնազրկված է, բայց ինքը հիվանդության պատճառով դեռ չի կարող ժամանել էրզրում և իր ֆունկցիաների կատարումը ժամանակավորապես դնում է քաղաքի կայազորապետ Մունիր փաշայի վրա։

Ժողովուրդը դա համարելով իր հաղթանակի առաջին արգասիքը և հուսալով, թե դրան կհետևի հարկային բեռի թեթևացումը, ցրվեց։ Բայց մարտի 20-ին, երբ լուր տարածվեց, թե Զաքքի փաշայի պատասխանը հորինված է, էրզրումցիները կրկին ալեկոծվեցին ու շրջապատեցին հեռագրատունը։ Նրանք ավելի բորբոքվեցին, երբ լսեցին, թե Նազիմ փաշան հայտնել է կառավարությանը, որ նոր տուրքից խուսափում են միայն հարուստները, իսկ հասարակ մարդիկ անխռով վճարում են այն, թե կուսակալը նույնիսկ այդ առթիվ ստորագրություններ է ուղարկել մայրաքաղաք, որոնց հիման վրա վերևից կարգադրել են գանձել նոր հարկը, իսկ դիմադրողներին՝ պատժել։ Մարտի 21-ին ժողովուրդը նոր հեռագիր ուղարկեց սուլթանին՝ պահանջելով անհապաղ պաշտոնազրկել Նազիմ փաշային։ Սուլթանն ի վերջո հարկադրված եղավ հաշվի նստել ժողովրդի հետ և մարտի 22-ին կարգադրեց էրզրումի կուսակալին տեղափոխել Դիարբեքիր և՝ հակառակը։

Մինչ կատարվում էր վալիների փոխանակում, քաղաքն իրենց ձեռքը վերցրած ջանվերիրներն անցկացրին մի շարք միջոցառումներ։ Նրանք պաշտոնազրկեցին հեռագրատան պետին, քաղաքական ու քրեական դատարանների նախագահներին և այլ պաշտոնյաների։ Ապա մշակեցին իրենց պահանջները, որոնց համաձայն անհրաժեշտ է վերացնել նոր հարկը, վճարել պաշտոնյաների ու զինվորականների աշխատավարձը, անդորրագիր տալ կապալառուներին՝ նրանցից պարտք վերցնելու դեպքում, սահմանել խիստ վերահսկողություն վիլայեթի իշխանությունների գործունեության, հատկապես ֆինանսների վրա, իջեցնել հայերից գանձվող բեդելի-ասկերի հարկը, ցրել համիդեական գնդերը և այլն։ Ջանվերիրներն այս պահանջներն ուղարկեցին դեռ քաղաք չմտած նոր կուսակալին և սպառնացին նոր ելույթներով, եթե դրանք չկատարվեն[16]։

1906 թ. մարտի 25-ին էրզրումի նախկին կուսակալ Նազիմ փաշան քաղաքից հեռացավ, իսկ նոր կուսակալ Շեվքեթ փաշան նույն ամսի 28-ին ժամանեց էրզրում։ Ապրիլի 16-ին մայրաքաղաքից հանձնաժողով եկավ էրզրում՝ մարտյան դեպքերը քննելու համար։ Այն նստեց զորանոցում և հարցաքննության կանչեց մի խումբ հարուստ մահմեդականների։ Բայց սրանք հրաժարվեցին ներկայանալ, պատճառաբանելով, որ հանձնաժողովն ըստ էության ռազմական հետաքննությամբ է զբաղվում, իսկ իրենք զինվորականներ

16 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1906, ց. 482, գ. 1642, թ. 60։

չեն։ Ապրիլի 18-ին հանձնաժողովը ստիպված զորանոցից տեղափոխվեց քաղաք և հաստատվեց կառավարչատանը։ Այն հարցաքննությունն այնպես էր վարում, որ մարտյան դեպքերը կապվեին հայերի հետ ու այդ հիման վրա սանձազերծվեր հայկական նոր սպանդ[17]։ Սակայն շարժմանը մասնակցած մահմեդականները հայտարարեցին, որ գործել են ինքնուրույն, իսկ հայերը հետևել են իրենց։ Հանձնաժողովը, չհասնելով իր նպատակին, մայիսի 3-ին մեկնեց Կ. Պոլիս։

1906 թ. աշնանը համիդյան կառավարությունը փորձեց հարձակման անցնել Էրզրումի հեղափոխական ուժերի դեմ։ Հոկտեմբերի 10-ի գիշերը իշխանությունները ձերբակալեցին ու քաղաքից արտաքսեցին վիլայեթի մյուֆթիին և ջանվերիրների հինգ ղեկավարների։ Բայց կառավարության այդ քայլը հանդիպեց Էրզրումցիների համառ դիմադրությանը։ Հոկտեմբերի 11-ին ժողովուրդը սպանեց ավագ ոստիկանապետին։ Երբ սպանվածի գրպանում հայտնաբերվեց աքսորի ենթակա 60 հոգու ցուցակ, ժողովուրդը սպանեց նաև նրա որդուն։ Բազմությունը, այնուհետև, սկսեց փնտրել ժանդարմապետ Ալայ բեյին, բայց չգտնելով, շարժվեց դեպի կուսակալի բնակարանը, կոտրեց զինվորների դիմադրությունը, որսաց սարսափահար դես ու դեն փախչող Շեվքեթ փաշային, դագանակի հարվածներով վիրավորեց գլուխը և քարշ տվեց դեպի մզկիթ։ Այստեղ նրան սպառնալիքով առաջարկեցին անհապաղ ետ բերել աքսորվածներին։ Թեպետև կուսակալը կատարեց նրանց պահանջը, բայց նրան պահեցին մզկիթում այնքան ժամանակ, քանի դեռ աքսորյալները չէին վերադարձել։ Երբ Շեվքեթ փաշան մզկիթում բանտարկված էր, լսում էր թե ինչպես ամբոխը դրսից գոռում էր. «Վալի փաշա, եթե աքսորյալները մինչև երեկո չգան, քեզ էլ սեր-քոմիսերի (ոստիկանապետի— Ա. Հ.) պես սատկեցնելու ենք»[18]։ Բազմությունը կուսակալին ազատեց հոկտեմբերի 12-ին, երբ բոլոր աքսորյալները վերադարձել էին։

Կառավարությունը Էրզրումցիների հուզումները մեղմելու նպատակով պաշտոնազրկեց Շեվքեթ փաշային, նրա փոխարեն նշանակեց Խարբերդի կուսակալ Նուրի բեյին և ապա հայկական նոր ջարդ կազմակերպելու նպատակով լուր տարածեց, թե իբր հայերը ներխուժել են մզկիթը և անարգել։ Բայց ժողովրդական զանգվածները չենթարկվեցին այդ պրովոկացիային, մանավանդ, երբ ստուգեցին ու տեսան, որ լուրը սուտ է։

Նոր կուսակալ Նուրի բեյը 1906 թ. նոյեմբերի 15-ին իր մոտ կանչեց մյուֆթիին և առաջարկեց՝ համոզել ժողովրդին, որ նա վճարի նոր հարկը։ Սակայն մյուֆթին հայտարարեց, որ դա չի մտնում իր պարտականությունների մեջ։ Կուսակալը նույն առաջարկությամբ դիմեց ջանվերիրների ղեկավարներին, որոնք պատասխանեցին, թե ժողովուրդն անկարող է այդ անել։ Նոյեմբերի վերջերին Նուրի բեյը կրկնեց իր առաջարկը և ջանվերիրներից պահանջեց նաև հրապարակորեն հայտարարել, որ իրենք սխալվել են՝ կազմակերպելով հակակառավարական ցույցեր։ Կուսակալը սպառնաց, որ հակառակ դեպքում նախկին աքսորյալները կրկին կվտարվեն քաղաքից։ Սակայն նրա սպառնալիքները տվեցին հակառակ արդյունք։ Էրզրումցիները դեկտեմբերին դուրս եկան նոր ցույցերի ու հեռագիր հղեցին սուլթանին։ Պատասխան

17 ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 7, թթ. 106—108։

18 «Դրոշակ», 1906, № 11, էջ 165։

չստանալով, ջանվերիրների կոմիտեն 1907 թ. հունվարին հրապարակեց երկու կոչ՝ մեկը ժողովրդին, իսկ մյուսը՝ զինվորներին։ Առաջինում քարոզվում էր համերաշխություն, միասնություն, համատեղ պայքարի հաստատակամություն, պառլամենտի հրավիրում, 1876 թ. սահմանադրության վերականգնում, երկրի դուրս բերում օտարերկրյա կախումից ու ստրկացումից, իսկ երկրորդում բացատրվում էր զինվորներին, որ նրանց ծանր կացությունը կառավարության քաղաքականության արդյունք է։ Կոմիտեն զինվորներին կոչ էր անում պաշտպանել ոչ թե իշխանություններին, այլ ժողովրդին, չկրակել իրենց հայրերի, մայրերի, եղբայրների ու քույրերի վրա, քանզի նրանք պայքարում են նաև իրենց բախտավորության համար[19]։

Էրզրումցիների համառ ու համերաշխ պայքարը վերջապես տվեց իր արդյունքը։ 1907 թ. մարտին կառավարությունը ստիպված եղավ վերացնել մահմեդականների անձնական հարկն ու անասնահարկը, իսկ քրիստոնյաների՝ բեդելի-ասկերին[20]։ Քաղաքի վերնախավը բավարարվեց դրանով ու անցավ կառավարության կողմը, բայց ներքնախավը պահանջեց նաև դեմոկրատական այլ միջոցառումներ։ Այսպիսով՝ շարժման մասնակիցների միասնական ճակատը ճեղքվեց։ Այն ավելի խորացավ, երբ ունևոր մահմեդականները փորձեցին ավելի սեղմել քրիստոնյաների իրավունքները, պահանջելով նրանց դատարանների վերացում և փոխարինում մահմեդական ընդհանուր դատարանով՝ շարիաթով[21]։

1907 թ. օգոստոսին Էրզրումում կրկին հեղափոխական ընդվզումներ բռնկվեցին։ Դա հետևանք էր այն բանի, որ մահմեդական ու քրիստոնյա հացավաճառները, օգտվելով տիրող սովից, կրկնապատկեցին ցորենի գինը, նրա մի կոտը վաճառելով 50 փարայով։ Ժողովուրդը հացավաճառներից պահանջեց ցորենը վաճառել նախկին գնով, բայց մերժում ստանալով, օգոստոսի 25-ին նույն առաջարկությամբ դիմեց կուսակալին։ Երբ Նուրի բեյը պատասխանեց, թե դա չի մտնում իր պարտականությունների մեջ, ամբոխը սկսեց հաշվեհարդար տեսնել հացավաճառների հետ, սպանելով հայ բողոքական Գրիգոր Օհանյանին և թուրք Մուստաֆա էֆենդուն։ Նրանցից առաջինի դիակը նետվեց լուսավորչական հայերի գերեզմանոց, իսկ երկրորդինը՝ աղբանոց։ Այնուհետև սկսվեց հացավաճառների ունեցվածքի թալանը։ Հատկանշական է, որ զինվորներն ու ոստիկանները այդ իրադարձություններին չմիջամտեցին։ Ժողովրդական ցասումից սարսափած հացավաճառները ստիպված եղան մեկ կոտ ցորենը այժմ վաճառել 30 փարայով[22]։

1907 թ. աշնանը քաղաքում հուզումները դադարեցին։ Նոյեմբերի 18-ին Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Ն. Սկրյաբինը հաղորդում էր, որ այնտեղ բնակչության «հուզումները կարելի է համարել դադարած»[23]։ Սուլթան Աբդուլ Համիդը սկսեց հաշվեհարդար տեսնել Էրզրումի հեղափոխական զանգվածների հետ։ Կիրառվեցին մասսայական ձերբակալություններ ու հետաքննություններ։ Բանտ նետվեցին հուզումների բազմաթիվ մասնակիցներ։ Դեկ-

19 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», գ. 1643, թթ. 5—6։
20 Նույն տեղում, թ. 56։
21 Նույն տեղում, թ. 86։
22 Վրացական ՍՍՀ ԿՊԱ, ֆ. 521, ց. 9, գ. 8, թթ. 22—25, «Մշակ», 1907, № 134—135։
23 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1907, գ. 1643. թ. 274։

տեմբերի 2-ին կալանավորների թիվը հասավ 112-ի։ Ծայր առան մատնությունները. հարցաքննության կանչվեցին նաև զինվորականներ, պաշտոնյաներ, ուսուցիչներ, լրագրողներ, անգամ սովորողներ։ Հարցաքննության ժամանակ նրանց ծեծում էին, գցում մութ ու խոնավ նկուղները, օրերով քաղցած կամ ծարավ էին թողնում ու ենթարկում այլ զրկանքների։

Կաշառք կորզելու նպատակով իշխանության ներկայացուցիչները մեղադրանքներ էին ներկայացնում քաղաքի հարուստներին և իրենց նպատակին հասնելով՝ մեղմում վճիռը կամ ազատ արձակում։ Էրզրումի վերնախավը ոչինչ չէր խնայում իր կամ հարազատների փրկության համար։ Այսպես, օրինակ, քաղաքի հարուստներից մեկը՝ Իզզեթ բեյը, որդուն ազատելու համար ոստիկանապետին «նվիրեց» շուրջ 8.000 լիրա։ Կաշառակերության շնորհիվ համիդյան պաշտոնյաները, ինչպես նշում էր ականատեսը, հարստանում էին «ոչ թե օրերով, այլ ժամերով»[24]։ Համիդյան հետապնդումներն ու ձերբակալությունները շարունակվեցին նաև 1908 թ. սկզբներին։ Միայն հունվարի առաջին օրերին իշխանությունները բանտարկեցին 50 մարդու։ Հունվարի 28-ին քաղաքի քրեական դատարանը, վերջապես, լսեց 99 ձերբակալվածների գործը և նրանցից 8-ին դատապարտեց մահապատժի, 68-ին՝ տարբեր ժամկետներով բանտարկության, իսկ 23-ին ազատեց՝ որպես անմեղների ու անչափահասների[25]։ Համիդյան այդ բռնությունները, սակայն, չկարողացան խեղդել երկրում աճող հեղափոխական շարժումները։

Վանում հեղափոխական ընդվզումները ծավալվեցին 1906 թ. գարնանը։ Քաղաքի փողոցներում ու հրապարակում երևացին թռուցիկներ, որոնք կոչ էին անում մահմեդականներին՝ թողնել հակահայկական տրամադրությունները և պայքարի սլաքն ուղղել ընդդեմ կառավարության։ Թռուցիկներից մեկում ասվում էր. «Մենք, իսլամներս, մինչև հիմա հանցավոր կհամարեինք հայ հեղափոխականները՝ ճանաչելով զանոնք իբրև խռովարարներ։ Բայց մենք մինչև այժմ կուրորեն ենթարկված լինելով կառավարության հարստահարությանց ու ճնշումներուն, կկարծեինք, թե արդեն այս էր մեր ճակատագիրը՝ որուն մինչև վերջ պարտավոր ենք հնազանդիլ։ Իսկ այժմ բացված են մեր մտքերն ու աչքերը, և մենք ալ ենթարկվելով հայերու վիճակին ու բախտին, կձայնակցենք անոնց բողոքներուն ու կազդարարենք, որ վերացնենք այս խիստ ճնշումները ու հարստահարությունները, որոնք այլևս անտանելի են մեզ համար։ Անուղղակի տուրքերը, դատարանական զեղծումները, կաշառակերությունները ու ամբողջ պաշտոնական խայտառակությունները մեր ժողովուրդը ծայր աստիճան թշվառության ու հետամնացության մատնեցին՝ որոնց այլևս չենք կարող դիմանալ։ Այո կամ ոչ պատասխան»[26]։

Ոստիկանները պոկում էին թռուցիկները, հավաքում ու ոչնչացնում դրանք, ձերբակալում էին կասկածելիներին ու բանտ նետում։ Այնուհետև տեղական իշխանությունները ցանկանալով ողջակիզել «խռովարարներին» ու արմատախիլ անել հեղափոխական շարժումները, 1906 թ. հուլիսի 1-ին հրդեհեցին բանտը։ Այդ քայլն ավելի բորբոքեց ժողովրդի ցասումը և նոր ընդվզումների առիթ տվեց։ Քաղաքի բնակիչները դուրս եկան ցույցի և պահան-

24 Նույն տեղում, թ. 285, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1907, ց. 482, գ. 2675, թ. 299։
25 Նույն տեղում, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1908, գ. 2676, թթ. 16—17։
26 «Հնչակ», 1906, № 6, էջ 54։

ջեցին՝ վերջ դնել ձերբակալվածների նկատմամբ կիրառվող բարբարոսություններին։ Համառ պայքարով նրանք հասան այն բանին, որ իշխանությունները պաշտոնազրկեցին երկու անձանց, դադարեցրին վայրագությունները և թույլատրեցին վանեցիներին՝ այցելել բանտարկված հարազատներին։

1907 թ. քաղաքում տեղի ունեցավ հայ բնակչության նշանավոր ելույթը։ Հունվարի 29-ին նրանք դիմեցին Կ. Պոլսի պատրիարքին՝ խնդրելով միջնորդել կառավարության առաջ՝ մեղմել հարկային քաղաքականությունը։ Պատասխան չստանալով, Վանի հայոց քաղաքական ժողովը փետրվարի 12-ին հրաժարական տվեց։ Բայց իշխանությունները ոչ միայն հաշվի չնստեցին այդ փաստի հետ, այլև ավելի խստացրին հարկահանումը։ Մթնոլորտը շիկացավ։ Կուսակալ Ալայ-բեյը, վախենալով վանեցիների վրիժառությունից, փողոց էր դուրս գալիս ոստիկանների ու զինվորների ուղեկցությամբ։ Կառավարությունը, փորձելով խուսափել դեպքերի հետագա բարդացումից, 1907 թ. սեպտեմբերին պաշտոնազրկեց Ալայ-բեյին։ Նա թողեց Վանը և ուզում էր Անդրկովկասի վրայով մեկնել Կ. Պոլիս, բայց Բաթումում սպանվեց[27]։

Դեռ չէին վերջացել հակակառավարական ընդվզումները, երբ Վանի մի շարք արհեստանոցներում բռնկվեց բանվորների ու աշակերտների շարժումն իրենց տերերի դեմ։ 1907 թ. հոկտեմբերին կահույքագործները գործադուլ հայտարարելով պահանջեցին աշխատավարձի բարձրացում և դժբախտ պատահարների դեպքում փոխհատուցում։ Նրանք արհամարհում էին տերերի կամ վարպետների սպառնալիքները, թե գործի չանցնողները կզրկվեն աշխատանքից, իսկ իրենց դավաճան ընկերներին ենթարկում էին հրապարակային նախատինքի, անգամ ծեծի[28]։ Ցավոք մեզ անհայտ է, թե ինչպես վերջացավ կահույքագործների պայքարը։

Համարյա այդ նույն ժամանակաշրջանում Վանում գործադուլ հայտարարեցին նաև կոշկակարները, որոնք նույնպես պայքարում էին իրենց տնտեսական դրության բարելավման համար։ Համառ պայքարի շնորհիվ, կոշկակարները ձեռք բերեցին մի շարք նվաճումներ (կրկնապատկվեց նրանց աշխատավարձը, կրճատվեց աշխատանքի տևողությունը, նշանակվեց վարձատրություն նաև այն դեպքերում, երբ գործավորները պարապ էին մնում տերերի պատճառով)։ 1907 թ. դեկտեմբերի 22-ին «Վտակը» խոսելով Վանի քաղաքական անցուդարձերի մասին, գրում էր. «տնտեսական սուղ դրությունը պատճառ եղավ առաջ բերելու աշակերտական-բանվորական շարժում մը մի քանի արհեստների մեջ։ Գունտուրաջիների միությունը առաջինն էր իր տեսակի մեջ, որ չնայած իր անդամների սակավության... տարավ հաղթանակ՝ մի բավական երկար գործադուլով... ողջ քաղաքը կարծես քնից նոր զարթնող մարդու կնմանի։ Ամեն ոք կաճապարի առաջ ընթանալ և խլել իր իրավունքները»[29]։

1905—1908 թթ. հեղափոխական շարժումներ տեղի ունեցան նաև Արևմտյան Հայաստանի մյուս մեծ քաղաքներում։ 1906 թ. սկզբներին Սվազի բնակիչները ծառացան կառավարության հարկային քաղաքականության, իսկ Խարբերդում՝ կապիտալիստական շահագործման դեմ։ Սվազցիները ստիպե-

---

27 ՌԱՔԱ, ֆ. «Քաղաքխիվ», 1907, ց. 482, գ. 715, թթ. 6—7։

28 «Մշակ», 1907, № 148։

29 «Վտակ», 1908, № 31։

ցին կառավարությանը վերացնել նոր հարկը[30], իսկ խարբերդցիները հարկադրեցին ձեռնարկատերերին՝ բարձրացնել բանվորների աշխատավարձը[31]։

Արևմտյան Հայաստանի մեծ քաղաքների օրինակով պայքարի դուրս եկան նաև փոքր քաղաքներն ու գյուղաքաղաքները։ Կյուրինում 1907 թ. գործադուլ հայտարարեցին շուրջ 2000 կտավագործներ և պահանջեցին բարելավել իրենց տնտեսական վիճակը։ Երբ պայքարն ընդունեց համառ բնույթ, գործին միջամտեց քաղաքապետի տեղակալը։ Բայց սա, բախվելով գործադուլավորների աննահանջ դիրքերին, հարկադրված եղավ առաջարկել ձեռնարկատեր-վաճառականներին՝ կատարել որոշ զիջումներ։ Գործադուլավորներին համակրող ականատեսն այդ օրերին նշում էր, որ քաղաքապետի տեղակալը աշխատում է «գործին վախճան մը տալ և կհուսանք ի մոտո վայելել պտուղը»[32]։

Այդպիսով, 1905—1908 թթ. Արևմտյան Հայաստանի քաղաքներում տեղի ունեցած հեղափոխական ելույթների շարժիչ ուժերը աշխատավոր զանգվածներն էին, իսկ ղեկավարը՝ բուրժուազիան։ Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր նպատակները. օգտագործելով մասսաների պայքարը, բուրժուազիան ձգտում էր հասնել որոշ զիջումների և այնուհետև գործարքի մեջ մտնել սուլթանի հետ, բայց աշխատավոր զանգվածները ջանում էին ձեռք բերել ավելի մեծ արդյունքներ։

Շարժմանը մասնակցում էին և՛ մահմեդականները, և՛ քրիստոնյաները։ Սակայն ավելի ակտիվ դեր էին խաղում մահմեդականները, իսկ քրիստոնյաները, այսինքն՝ հայերը 1890-ական թվականներին ենթարկվելով մասսայական կոտորածների և այնուհետև գտնվելով դամոկլյան սրի տակ, խուսափում էին կանգնել շարժման ավանգարդում, զգուշանալով, թե առիթ կտան կազմակերպելու հայկական նոր ջարդեր։ Բայց այդուհանդերձ նրանք ևս նշանակալից դեր խաղացին հեղափոխական շարժումների մեջ։

Հատկանշական է, որ հակառակ կառավարության ցանկություններին ու ձգտումներին, քաղաքների մահմեդական ու քրիստոնյա բնակիչները պայքարի ընթացքում շատ հաճախ ցուցաբերում էին համերաշխություն ու համագործակցություն և մերժում էին իշխանությունների փորձերը՝ ազատագրական պատերազմը ազգամիջյան գզվռտոցների վերածելու ուղղությամբ։

Արևմտյան Հայաստանի հեղափոխական ընդվզումները կտրված էին միմյանցից, առաջանում էին գերազանցապես տնտեսական դրդապատճառներով և ընթանում տարբերյնորեն։ Սակայն որոշ դեպքերում շարժման մասնակիցները առաջ էին քաշում նաև քաղաքական խնդիրներ, պահանջելով 1876 թ. սահմանադրության կենսագործումը և դեմոկրատական այլ միջոցառումներ։

Իրենց բոլոր թերություններով հանդերձ, Արևմտյան Հայաստանի քաղաքային բնակչության ելույթները պետք է համարել առաջադիմական լուրջ քայլ։ Կազմելով Թուրքիայում ծավալված սոցիալ-տնտեսական ու ազգային-ազատագրական պայքարի բաղկացուցիչ մասը, նրանք խարխլում էին սուլթանական բռնապետության հիմքերը և արագացնում նրա կործանումը։

---

30 Վրացական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 71, գ. 7, թ. 60։

31 Վահե Հայկ, Խարբերդը և նրա ոսկեղեն դաշտը («Հուշամատյան պատմական, մշակութային և ազգագրական»), Նյու-Յորք, 1959, էջ 616—617։

32 «Երկրի Ձայն», 1907, № 70, էջ 4—5։

РЕВОЛЮЦИОННОЕ ДВИЖЕНИЕ В ГОРОДАХ ЗАПАДНОЙ АРМЕНИИ В 1905—1908 гг.

А. С. АМБАРЯН

Резюме

Первая русская буржуазно-демократическая революция оказала значительное влияние на развитие освободительного движения угнетенных народов многих стран, в том числе и Турции. Под непосредственным воздействием этой революции вспыхнуло народное движение и в городах Западной Армении. В 1905—1908 гг. в Эрзеруме, Диарбекире, Ване, Битлисе, Харпуте, Сивасе и в других городах магометанское и христианское население совместно выступило против султана. Попытки турецкого правительства превратить освободительную борьбу городского населения Западной Армении в межнациональную резню не увенчались успехом. Выступления городского населения Западной Армении, будучи органической частью революционного движения в Турции, способствовали низложению в 1908 г. гамидовской тирании.